**Համաձայնագիր 1**
**20.03.2017թ. կնքված N ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-17.1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխությունների կատարելու մասին**

ք.Երևան «07» «06» 2017թ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Ա.Յավրումյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 20.03.2017թ. կնքված N ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-17.1 ծածկագրով գման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 7.1 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.2 Սահմանել, որ Պատվիրատուն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված մատուցված ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

1.3 20.03.2017թ. կնքված N ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-17.1 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2017 թվականի մարտի 20-ից փաստացի ծագած հարաբերությունների վրա:

## 2.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն պայմանգրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ և ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
Հ/Հ 900013202016, Հ/Հ 900013574018
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան ____________
/ստորագրություն/

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«ՓԱՅԼՔ» ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, ք. Տաշիր, Գրիբայեդովի 5/14
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, Տաշիր մ/ճ
Հ/Հ 220143330235000
ՀՎՀՀ 06948686
տնօրեն՝

Ա.Յավրումյան ____________
/ստորագրություն/

Հավելված
Հաստատված է 20.03.2017թ. կնքված
ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-17.1 ծածկագրով
գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը * | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2017թ. բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ. որում | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Մինչև 2017 թ. դեկտեմբերի 25-ը | Ընդամենը Տարի |
| 4239 | Մաքրման ծառայությունների | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 | 850 000 | 850 000 | 850 000 | **850 000** |

| Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը * | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2017թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ. որում | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Մինչև 2017 թ. դեկտեմբերի 25-ը | Ընդամենը Տարի |
| 4239 | Մաքրման ծառայությունների | 3 861 000 | 6 870 000 | 6 870 000 | 6 870 000 | 9 878 000 | 9 878 000 | 9 878 000 | **9 878 000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
Հ/Հ 900013202016, Հ/Հ 900013574018
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավար

**Ա.Սահակյան** ____________
/ստորագրություն/

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՓԱՅԼՔ» ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, ք. Տաշիր, Գրիբայեդովի 5/14
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, Տաշիր մ/ճ
Հ/Հ 220143330235000
ՀՎՀՀ 06948686
տնօրեն՝

**Ա.Յավրումյան** ____________
/ստորագրություն/